


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2004թ. հունվար-օգոստոս		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. հունվար-օգոստոս	2004թ. հունվար-օգոստոս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը <i>այդ թվում</i>	622709.4	110.4	100.0	100.0
մանրածախ ապրանքաշրջանառություն	476554.7	109.2	76.4	76.5
բնակչությանը մատուցված ծառայություններ	146154.7	116.7	23.6	23.5

**Սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(ընդհանուրի նկատմամբ %)**



2004թ. հունվար-օգոստոսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 10.4% աճ՝ 2003թ. հունվար-օգոստոսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 0.1 տոկոսային կետով աճել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2004թ. հունվար-օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 476554.7 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.2%-ով: 2004թ. օգոստոսին հուլիսի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 110.9%:

Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2004թ. հունվար-օգոստոսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	476554.7	100.0
<i>այդ թվում՝</i>		
խանութներ	272375.1	57.2
հանրային սնունդ	5487.3	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	147785.6	31.0
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	14584.4	3.1
կրպակներ	36322.3	7.6

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2004թ. հունվար-օգոստոսին

(ընդհանուրի նկատմամբ %)



2004թ. հունվար-օգոստոսին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 88.2% (420160.7 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2004թ. հունվար-օգոստոսին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 147785.6 մլն. դրամ:

Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվար-օգոստոսին


	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	136962.9	8.1	91.9
Արագածոտն	99.0	-	100.0
Արարատ	676.4	2.1	97.9
Արմավիր	1910.0	22.9	77.1
Գեղարքունիք	966.1	23.5	76.5
Լոռի	3348.8	58.3	41.7
Կոտայք	1599.7	17.1	82.9
Շիրակ	867.5	4.6	95.4

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Սյունիք	310.8	-	100.0
Վայոց ձոր	78.8	-	100.0
Տավուշ	965.6	29.4	70.6
Ընդամենը	147785.6	9.7	90.3

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2004թ. հունվար-օգոստոսին կազմել է 90.3%:

**Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության
ծավալն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի (ամփոփ)**

(ընդհանուրի նկատմամբ %)



2004թ. հունվար-օգոստոսին 2003թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 1.0 տոկոսային կետով:

2004թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 54384.3 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 59 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-օգոստոսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.1% կամ 14584.4¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2004թ. հունվար-օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը ընթացիկ գներով կազմել է 146154.7 մլն.դրամ, որը 2003թ. հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 16.7%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 2750.3 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 34.9%-ով:

2004թ.հունվար-օգոստոսին 2003թ. հունվար-օգոստոսի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.8% հավելւած, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (3.3%), մարդատար տրանսպորտի (3.0%), փոստային և հեռահաղորդակցության (2.1%), մշակույթի (30.3%), զբոսաշրջության և էքսկուրսային (2.6%), առողջարանների և հանգստյան տների (2.6%), բնակարանային-կոմունալ տնտեսության (2.2%) ծառայությունների սակագների հավելւածով: Կրթության, բժշկական և կենցաղային ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար 1.3, 0.6 և 1.4%-ով:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը
2004թ. հունվար-օգոստոսին**

(ընդամենի նկատմամբ %)



2004թ. հունվար-օգոստոսին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (43517.8մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (39232.9մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 29.8 և 26.9 %:

2004թ. հունվար-օգոստոսին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 2081.5մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 1.4%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 218.6 մլն. դրամ: